

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

4.11	Սոցիալ-քաղաքական	4.11-2
4.11.1	Ներածություն	4.11-2
4.11.2	Սոցիալ-տնտեսական միջավայրը	4.11-2
4.11.3	Սոցիալ-տնտեսական ելակետային տվյալների մեթոդաբանությունը	4.11-2
4.11.4	Երկրի մակարդակով սոցիալ-տնտեսական ընդհանուր պատկերը	4.11-8
4.11.5	Վարչատարածքային կառուցվածք	4.11-10
4.11.6	Տեղական ինքնակառավարման մարմիններ	4.11-12
4.11.7	Ծառայությունների մատուցման պարտավորություններ	4.11-14
4.11.8	Տեղական ինքնակառավարման մարմինների բյուջե	4.11-17
4.11.9	Համայնքների սոցիալ-տնտեսական կառուցվածքը և կազմակերպումը	4.11-18
4.11.10	ՀԿ-ներ և այլ հաստատություններ	4.11-18

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 4.11.1.	ՄԱԿ-ի՝ ՄԶԻ համեմատությունը հարևան երկրների հետ	4.11-9
Աղյուսակ 4.11.2.	ՄԱԿ-ի ՄԶԻ միտումները	4.11-9
Աղյուսակ 4.11.3.	Հայաստանի կառավարության օղակների յուրահատուկ գործառույթները	4.11-14

ՆԿԱՐՆԵՐ

Նկար 4.11.1.	Հայաստանի վարչատարածքային կառուցվածքի քարտեզ	4.11-11
--------------	--	---------

4.11 Սոցիալ-քաղաքական

4.11.1 Ներածություն

Սոցիալ-տնտեսական ելակետային տվյալները սոցիալական ազդեցության գնահատման հիմքն են: Չնայած սոցիալ-տնտեսական ելակետային ոչ բոլոր տվյալներն ուղղակիորեն կկիրառվեն ազդեցության գնահատման և վերլուծության ժամանակ, մինչ Ծրագրի շահագործումը դրանք բնութագրում են իրավիճակը երկրի, տարածաշրջանի և տեղական մակարդակով: Համապատասխան տեղեկատվությանը հղում կկատարվի ազդեցության գնահատման (Գլուխ 6) և կառավարման պլան (Գլուխ 8) գլուխներում:

4.11.2 Սոցիալ-տնտեսական միջավայրը

Սոցիալ-տնտեսական միջավայրը սահմանվել է երեք մակարդակներում: Ազգային միջավայրը ամբողջ երկիրն է: Միջավայրի մարզային ոլորտը ներառում է առաջարկվող հանքի տարածքում սփռված երկու մարզերը՝ Վայոց Ձորն ու Սյունիքը: Տեղական միջավայրը՝ Ամուլսարի Ծրագրի մոտակայքում գտնվող բնակավայրերն են, որոնց թվում են գյուղական ամենամոտ երեք բնակավայրերը՝ Գորայքը, Գնդեվազը և Սարավանը, ներառյալ Սարալանջն ու Ուղեձորը, ինչպես նաև Ջերմուկ քաղաքը (ներառյալ Կեչուտը): Նկար 4.1.5-ում սահմանված Սոցիալական ուսումնասիրության տարածքը նույնն է, ինչ տեղական սոցիալ-տնտեսական միջավայրը:

4.11.3 Սոցիալ-տնտեսական ելակետային տվյալների մեթոդաբանությունը

Ամուլսար ծրագրի համար սոցիալ-տնտեսական ելակետային տվյալները հավաքվել են 2010-2015 թթ. ընկած ժամանակահատվածի համար՝ կիրառելով տարբեր մեթոդներ: Բոլոր ուսումնասիրությունները զուգորդվել են առկա և հասարակական տեղեկատվության գրասենյակային ուսումնասիրության հետ, ներառյալ պետական էլեկտրոնային կայքեր, ՀԿ-ների զեկույցներ ու այլ առցանց տեղեկություններ: Ի լրումն, որոշ թեմաներ ներառել են տվյալների նախնական հավաքագրում, որոնք հակիրճ ներկայացված են ստորև:

Հարցումներ և հատուկ աշխատանքային խմբի քննարկումներ

2010թ. Էմ Փի Ջի Քրնսալթինգը (MPG) ծրագրի հարակից ամենամոտ երեք

գյուղական համայնքներում և Ջերմուկ քաղաքում իրականացրեց քանակական և որակական ուսումնասիրություններ: 2010թ. ապրիլին իրականացվեցին տնային տնտեսությունների (SS) հետ հարցազրույցներ՝ ներառյալ 141 հարցազրույց Գնդեվազում (SS-ների ընդհանուր թիվը 215¹), 54՝ Սարավանում (SS-ների ընդհանուր թիվը 70²) և 79-ը՝ Գորայքում (SS-ների ընդհանուր թիվը 137³): 2010թ. օգոստոսին Ջերմուկում անցկացվեցին հարցազրույցներ 540 SS-ների հետ (SS-ների ընդհանուր թիվը 2050), ինչպես նաև 61 SS Կեչուտում (SS-ների ընդհանուր թիվը 137), որն հանդիսանում է Ջերմուկի վարչական միավորի մաս⁴: Նշված հետազոտությունների շրջանակներում տոկոսային տիրույթը Գնդեվազի, Գորայքի և Սարավանի դեպքում ավելի բարձր է, քան Ջերմուկի և Կեչուտի: Այս համայնքներում հարցումներն ընդգրկեցին տնային տնտեսությունների ավելի քան 50%, մինչդեռ Ջերմուկի և Կեչուտի դեպքում հարցումներում ընդգրկվել էին դրանց համապատասխանաբար 26% և 17%-ը:

Հարցումների տեղեկությունները լրացվեցին հատուկ աշխատանքային խմբերի քննարկումներով: Գյուղական համայնքներում կազմվել է երկու աշխատանքային խումբ, չորսը Ջերմուկում, մեկը՝ Կեչուտում 2010 թ. ընթացքում: Աշխատանքային խմբերը քննեցին համայնքների կարիքներն ու միտումները: Այս համայնքներում անց են կացվել նաև մանրամասն հարցազրույցներ:

Քաղաքի և գյուղի մակարդակով հետազոտությունների տվյալները լրացվել են քաղաքապետերի և գյուղապետերի կողմից տարեկան կտրվածքով հավաքվող գյուղական համայնքի անձնագրի տվյալներով: Գյուղական համայնքի անձնագրի տվյալները հավաքագրվել են տարեկան կտրվածքով, 2009-ից 2015թթ.:

Առողջության վրա ազդեցության արագ գնահատում

Համայնքի առողջապահական վիճակի վերաբերյալ ելակետային տվյալներն հավաքագրվել են Շեյփ Բընսալթինգի կողմից 2012թ. իրականացված առողջության

¹ Գնդեվազ համայնքի անձնագիր, 2009.

² Սարավան համայնքի անձնագիր, 2010

³ Գորայք համայնքի անձնագիր, 2010

⁴ Ջերմուկի Քաղաքապետի հետ հաղորդակցություն, 2013

վրա ազդեցության արագ գնահատման շրջանակներում:

Ուսումնասիրությունները ներառել են այցելություններ Հայաստան և Ծրագրի տեղամաս՝ առողջապահության պաշտոնյաներից հարցազրույցներ վերցնելու, ինչպես նաև շրջակա առողջապահական հաստատություններում անմիջական դիտարկումներ կատարելու համար: Բացի իրազեկիչ հարցազրույցներից, հետազոտողներն իրականացրել են Գորայքի, Գնդեվազի ու Սարավանի աշխատանքային խմբերի նպատակային քննարկումներ՝ լրացուցիչ որակական տեղեկություններ հավաքելու նպատակով: Այս գնահատման եզրակացությունները թարմացվել են 2013, 2014 և 2015 թվականներին՝ ցույց տալու Ծրագրի նախագծի փոփոխությունները:

Կենսակերպ

Առաջին անգամ կենսակերպի վերաբերյալ ելակետային տեղեկությունները հավաքագրվել են 2010թ, MPG-ի կողմից իրականացված հարցման շրջանակներում: Տեղեկությունները թարմացվել են 2014թ. հոկտեմբերին հողի ձեռքբերման գործընթացի (կենսակերպի վերականգնման պլանին տեղեկություններ տրամադրելու նպատակով) միջոցով հավաքագրված, ինչպես նաև 2015թ. նոյեմբերին իրականացված լրացուցիչ հետազոտությունների տվյալների հիման վրա: Կենսակերպի վերաբերյալ հարցումն օգտագործվել է բոլոր հողատերերի և հողօգտագործողների վրա կենսակերպի ազդեցությունը գնահատելու համար այն տարածքներում, որտեղ Ծրագրում անհրաժեշտ կլինի հողի օգտագործումը: Հարցմանը մասնկացել է 252 տնային տնտեսություն:

Հմտությունների վերաբերյալ հարցումներ

2011թ վերջին/ 2012թ սկզբին Լիդիան ընկերությունը հմտությունների վերաբերյալ հարցումներ է իրականացրել Գորայք, Գնդեվազ և Սարավան գյուղերում: Հարցումների շրջանակներում հարցազրույց է վերցվել 198 բնակչից (77 բնակչից Գնդեվազում, 79՝ Գորայքում, իսկ Սարավանում հարցմանը մասնակցել է 41 բնակիչ):

2014թ. MPG խորհրդատվական խմբի կողմից անցկացվել են հարցումներ, որոնք ընդգրկել են նույն երեք գյուղերը և Ջերմուկ/Կեչուտ քաղաքը: Հարցումների

ընթացքում լրացվել են 844 հարցաթերթիկներ: Բոլոր գյուղերում հարցվածների ավելի քան 50%-ը կանայք էին: 2014թ. հարցումն անցկացվել է որպես տնային տնտեսությունների հետազոտություն և ընդգրկել է այս համայնքների 18-55 տարեկան բնակչության 25 %: Այս և 2011-2012թ. անցկացված հարցումները կենտրոնացած էին նշված համայնքներում ներկայումս բնակվող համայնքի բնակիչների վրա: Համայնքից դուրս բնակվող՝ տվյալ համայնքի ոչ մի ներկայացուցչի հմտությունների գնահատում չի կատարվել:

Էկոհամակարգի ծառայություններ

2011թ. դեկտեմբերին Լիդիան ընկերությունը Գորայք, Գնդեվազ և Սարավան գյուղերում իրականացրել է էթնոբուսաբանության գնահատում՝ հասկանալու համար, թե ինչպես են համայնքները հավաքում և օգտագործում տեղական բույսերը և դեղաբույսերը: Գնահատման ընթացքում օգտագործվել են նպատակային քննարկումները և տրամադրվել են հողօգտագործման սկզբնական վիճակի և էկոհամակարգի ծառայությունների վրա ազդեցության գնահատման մասին տեղեկությունները: Գնահատումը կատարվել է վեց նպատակային քննարկումների (երեք գյուղական համայնքներում երկուական խումբ) հիման վրա, որտեղ մասնակցում էին հավասար թվով տղամարդիկ և կանայք: Նպատակային յուրաքանչյուր քննարկումներում մասնակցում էր մոտավորապես 15 մարդ: Այս գնահատմանը ներգրավված է եղել ընդհանուր մոտ 90 մարդ:

Էկոհամակարգի ծառայությունների հետագա հետազոտություններն անցկացվել են 2014թ մոտեցումների համակցության միջոցով՝

- Նպատակային քննարկումներ են անցկացվել Գորայքի, Գնդեվազի, Սարավանի և Ջերմուկ/Կեչուտ բնակիչների և մի խումբ սեզոնային հովիվների հետ 2014թ.: Նպատակային քննարկումները համակարգվել են յուրաքանչյուր գյուղի համար՝ ապահովելով ներկայումս էկոհամակարգերի ծառայություններից օգտվող մարդկանց մասնակցությունը (այդ թվում տարածքում տեղի ունեցող գործողությունների ամբողջ տեսականուց՝ մեղվաբուծություն, խոտաբույսերի, սնկերի և խոտերի հավաքում, ինչպես նաև այն մարդիկ, ովքեր ավելի քիչ են օգտվում այդ ծառայություններից:

- Էկոհամակարգին առնչվող հարցերն ավելացվել են տնային տնտեսությունների կենսակերպի վերաբերյալ հարցումների հարցաթերթիկների մեջ, որոնք պետք է լրացվեն հողի ձեռքբերման կապակցությամբ տարվող աշխատանքներին աջակցելու համար: Հարցումներում մասնակցել են բոլոր տնային տնտեսությունները, որոնց հողը ձեռք է բերվելու, և տնային տնտեսությունները, որոնք օգտագործում են հողը, որը պետք է ձեռք բերվի:
- 2015թ. հունիսին ԲՄԱԳ-ի արդյունքները ստուգելու համար անցկացվեցին աշխատանքային խմբերի նպատակային հանդիպումներ, մեկը Խնձորեսկ գյուղի սեզոնային հովիվների հետ, իսկ մյուս չորս հանդիպումներն անցկացվեցին Ծրագրի ազդակիր Գորայք, Գնդեվազ և Սարավան գյուղերում ու Ջերմուկ/Կեչուտ համայնքում: Աշխատանքային խմբի հանդիպումներին մասնակցում էր 5-11 մարդ: Չորս հարցազրույց անցկացվեց արվեստի, մշակույթի, քաղաքական կառույցների և հասարակության ներկայացուցիչների հետ: Հանդիպումների և հարցազրույցների նպատակն էր մասնակիցներից ստանալ տեղեկատվություն առաջնային կարևորություն ունեցող էկոհամակարգերի փոփոխության և էկոհամակարգերի համար առանձնացված տարածքի հնարավորությունների վերաբերյալ: Նախատեսվող առանձնացված տարածքի օգտագործումն առավել մանրամասն ուսումնասիրելու նպատակով ևս երեք հարցազրույց անցկացվեց Ուղեձորում սեզոնին բնակվող հովիվների հետ:

Մշակութային ժառանգություն

2010-2014 թթ. Հայաստանի տեղական խմբերը, ներառյալ «Մշակութային ժառանգություն» ՀԿ-ն, իրականացրել են ինչպես գրասենյակային պայմաններում ուսումնասիրություններ, այնպես էլ դաշտային աշխատանքներ: Այցերն իրականացվել են ERM ընկերության հնագետի կողմից 2011 և 2013 թվականներին: 2014թ. իրականացված էկոհամակարգի վերը նշված հետազոտություններում ներառվել են անշոշափելի մշակութային ժառանգությունը և կենդանի ժառանգությունը:

Հովիվների մարդահամար

2012թ. հունիս-հուլիս ամիսներին ՈւԱԻ ընկերությունը երկու հետազոտական այցելություն կատարեց Ծրագրի տեղամաս՝ ուսումնասիրելու սեզոնային հովիվներին, ովքեր տարածքն օգտագործում են տարվա ընթացքում, բայց մշտական բնակություն չունեն մոտակա համայնքներում: Այցերի ժամանակ հովիվները դիտարկվել են որպես խոցելի խումբ, հաշվի առնելով այն, որ նրանք զբաղվում են հովվությամբ որպես հիմնական ապրուստի միջոց, Ծրագրի տեղամասի հետ կապված նրանց կենսամիջոցի սեզոնային բնույթը և անհատներին ներառելու բարդությունը:

2012թ. օգոստոսին Լիդիան ընկերությունը, Ֆրեդերիկ Ջիովանետտիի խորհրդատվությամբ, իրականացրեց հարցում 70 հովիվների հետ: Հարցումները ընդգրկում էին Ծրագրի տարածքում հանդիպած սեզոնային և շրջակա ազդակիր տարածքներում բնակվող բոլոր հովիվներին: Հովիվների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները հավաքագրվել են վերը նկարագրված էկոհամակարգի ծառայությունների մասին նպատակային քննարկումների միջոցով, որոնք ավարտվել են 2014թ.հունիսին: Հովիվների լրացուցիչ հարցումներ անցկացվեցին 2015թ. սեպտեմբերին Գեոթիմի սոցիալական թիմի կողմից, որի նպատակն էր գնահատել Ծրագրի փոփոխված նախագծի հետ կապված ազդեցությունները հովիվների վրա: 2015թ. հետազոտությունում ընդգրկված էին Ծրագրի կողմից ազդեցություն կրող թե սեզոնային (որոնք հիմնականում գտնվում էին ԴԱԼ-ի նախատեսվող տեղամասի մերձակայքում) և թե ամենօրյա հովիվները (որոնք բնակվում են Գնդելագում):

Տուրիզմի ուսումնասիրություն

2013թ. Լիդիանը ուսումնասիրել է տուրիզմը ծրագրի տարածքում: Հետազոտության նպատակներն էին.

- Դիտարկել տուրիզմի զարգացման միտումները՝ մասնավորապես Ջերմուկում
- Ուսումնասիրել և գնահատել առաջընթացն ու փոփոխությունները՝ 2008թ.

Ջերմուկի տուրիզմի մանրամասն գնահատման համեմատ, որը պատրաստվել էր USAID-ի կողմից, և

- Ուսումնասիրել տուրիզմը զարգացնելու քայլերի առաջնահերթությունը՝ ազդեցությունը մեղմացնող կամ համայնքների զարգացման նախաձեռնությունների միջոցով:

Ուսումնասիրությունը ներառել է USAID-ի 2008թ. զեկույցի վերանայում և իրազեկիչ հարցազրույցների ու նպատակային խմբերի քննարկումներ: Հիմնական հարցումներն իրականացվել են 2013թ. փետրվար-մարտ ամիսներին այն կազմակերպությունների հետ, որոնք այս կամ այն կերպ առնչվում են տուրիզմի բնագավառի հետ, ինչպիսիք են հյուրանոցներն ու առողջարանները, տուրիստական գործակալությունները, տեղական ինքնավարման մարմինների պաշտոնյաները, համալսարաններն ու այլ ծառայություն մատուցողները: Լրացուցիչ ելակետային տվյալներ Ջերմուկում գտնվող հյուրանոցների վերաբերյալ հավաքվեցին 2015թ.

4.11.4 Երկրի մակարդակով սոցիալ-տնտեսական ընդհանուր պատկերը

2015թ. Հայաստանը համարվում էր մարդու զարգացման բարձր ցուցանիշ ունեցող խմբում և զբաղեցնում էր ՄԱԿ-ի՝ Մարդկային զարգացման ինդեքսի (ՄՁԻ)⁵ 85-րդ տեղը 188 երկրների ցուցակում: ՄՁԻ-ն բազմաբաղադրիչ ցուցանիշ է, որը չափում է մարդու բարեկեցությունը՝ օգտագործելով այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք են եկամուտը, կրթությունը և առողջապահական վիճակագրությունը: Ստորև ներկայացված 4.11.1 Աղուսյակը համադրում է Հայաստանի ՄՁԻ ցուցանիշը հարևան պետությունների և Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի, ինչպես նաև ՄՁԻ բարձր ցուցանիշ ունեցող երկրների միջինացված թվերի հետ:

⁵ International Human development Indicators, UNDP 2012, <http://hdrstats.undp.org/en/countries/profiles/ARM.html>
ZT520088
Հունիս 2016թ.

Աղյուսակ 4.11.1. ՄԱԿ-ի՝ ՄՁԻ համեմատությունը հարևան երկրների հետ ⁶					
ՄՁԻ ցուցանիշ	Երկիր	ՄՁԻ	Կյանքի սպասված տևողությունը (տարի)	Կրթության ակնկալվող տարիները	Մեկ շնչին ընկած համախառն ազգային եկամուտը (GNI) ^{*1} (ԱՄՆ դոլար)
85	Հայաստան	0.778	69.1	14.3	14,461
76	Վրաստան	0.745	73.9	13.2	5,005
78	Ադրբեջան	0.734	70.9	11.7	8,153
76	Իրան	0.742	73.2	14.4	10,695
Տվյալներ չկան	Եվրոպա և Կենտրոնական Ասիա	0.771	71.5	13.7	12,243
Տվյալներ չկան	ՄՁԻ բարձր ցուցանիշ ունեցող երկրներ				

Ծանոթագրություն՝
 * Հաշվարկված է միջինը 31 երկրների տվյալներով
 *¹ Համախառն ազգային եկամուտի տվյալներն (GNI) հաշվարկված են 2005թ. հաստատուն գնողունակության հավասարության հիման վրա

Հայաստանի զարգացման դիտարկումը 1990թ. սկսած ՄՁԻ ցուցանիշների համեմատ ցույց է տալիս շարունակական առաջընթաց՝ 1990-1995 թթ. անցումային տարիներին ցուցանիշների անկումից հետո (տես Աղյուսակ 4.11.2):

Աղյուսակ 4.11.2. ՄԱԿ-ի ՄՁԻ միտումները⁷

⁶ UNDP. Human Development Report 2013, Rise of the South: Human Progress in a Diverse World. New York, USA. 2013
 ZT520088
 Հունիս 2016թ. Տարբերակ 10

Տարի	Կյանքի տևողությունը (տարի)	Կրթության միջին տարիները	Մեկ շնչին ընկած համախառն ազգային եկամուտը (GNI) 2011թ.	ՄՁԻ
1990	67.9	10.1	3,581	0.632
1995	68.8	10.4	2,170	0.605
2000	71.2	10.8	3,004	0.648
2005	73.2	10.8	5,533	0.695
2010	74.1	10.8	6,838	0.721
2011	74.2	10.8	7,054	0.723
2012	74.4	10.8	7,584	0.728

4.11.5 Վարչատարածքային կառուցվածք

Հայաստանը բաժանված է 11 վարչատարածքային շրջանների, որոնք ներառում են 10 մարզեր և մայրաքաղաք Երևանը, որն ունի համայնքի կարգավիճակ:

Մարզերը ցուցադրված են Նկար 4.11.1-ում՝ Հայաստանի վարչական քարտեզ:

⁷ ՄԱԶԾ: Մարդկային զարգացման ազգային զեկույց 2013թ: Հարավի բարձրացում՝ մարդկային զարգացումը բազմազան աշխարհում: 2013թ. Բացատրագիր ՄԱԱԶ ցուցանիշների վերաբերյալ: Հայաստան, Նյու Յորք, ԱՄՆ 2013թ: UNDP. Human Development Report 2013, Rise of the South: Human Progress in a Diverse World - Explanatory note on 2013 HDR composite indices -- Armenia . New York, USA. 2013. MAZ}

քաղաքային համայնքները պատկանում են Վայոց Ձորի մարզին:

Մարզերն ավելի շատ կենտրոնական վարչակազմի ստորաբաժանումներ են, այլ ոչ թե կառավարության ¹⁰ առանձին օղակ: Մարզպետներն իրականացնում են մի շարք օրենքով սահմանված պարտականություններ մարզպետարանների միջոցով և նշանակվում ու պաշտոնից ազատվում են կառավարության որոշմամբ: Այդ պարտականությունները վարչատարածքային բնույթ են կրում՝ առանց բյուջետային պարտականությունների:

4.11.6 Տեղական ինքնակառավարման մարմիններ

Հայաստանի կառավարությունն ունի երկմակարդակ կառուցվածք, ընդ որում վարչական իշխանական մարմինները կառավարվում են կենտրոնական կառավարության տարածքային կառավարման նախարարության կողմից: Կառավարման երկրորդ մակարդակը ներկայացված է ինչպես գյուղական այնպես էլ քաղաքային համայնքներով: Յուրաքանչյուր քաղաքային կամ գյուղական համայնք կարող է բաղկացած լինել մեկ կամ մի քանի բնակավայրերից (օրինակ, Հայաստանում կան հազարից ավել բնակավայրեր, սակայն միայն 915 համայնքներ¹¹): Համայնքներից քառասուն ինը քաղաքային են մինչդեռ մնացածը սահմանված են որպես գյուղական համայնքներ: Գյուղական և քաղաքային համայնքների միջև որևէ իրավական տարբերակում գոյություն չունի, իսկ անունները տրված են ըստ դիրքի, ենթակառուցվածքի և ավանդույթի:

Հայաստանի համար համայնքների խոշորացման գործընթաց է նախատեսվում: 50%-ից ավել գյուղական համայնքների կազմող բնակչության քանակությունը չի գերազանցում 1000 մարդը: Դրա արդյունքում շատ համայնքներում տնտեսական, ֆինանսական և մարդկային ռեսուրսների պակաս է գրանցվել, այդ թվում պայմանների և կարողությունների բացակայություն՝ արդյունավետ տեղական ինքնակառավարման և բնակչությանը բարձր որակի ծառայությունների

¹⁰ Համաշխարհային բանկի ենթակառուցվածքը և ենթգային ծառայությունների վարչություն (2004թ): Գյուղական ենթակառուցվածքը Հայաստանում՝ անրադառնալով ծառայությունների մատակարարման բացերին: Ուսումնասիրվել է 2012թ մայիսի 13-ին: The World Bank Infrastructure and Energy Services Department (2004). Rural Infrastructure in Armenia: Addressing Gaps in Service Delivery, viewed 13 May 2012. <http://siteresources.worldbank.org/INTARMENIA/Resources/Armenia-rural-Infra-arm.doc>

¹¹ ՀՀ Վիճակագրական ծառայություն (2015թ.) Հայաստանի Հանրապետության ընդհանուր բնութագիրը, armstat.com

տրամադրման համար: Ակնկալվում է, որ համայնքների խոշորացման գործընթացի արդյունքում որոշ համայնքներ կմիացվեն իրար, ինչն իր ազդեցությունը կթողնի վարչական կառուցվածքի և, մասնավորապես, գյուղական տարածքներում որոշ դերերի զբաղեցման վրա: Այս գործընթացի փորձնական մեկնարկը տեղի է ունեցել 2012թ. հոկտեմբերին ՀՀ Նախագահի կողմից՝ շեշտելով դրա կամավոր բնույթը¹²:

Ենթադրվում է, որ համայնքների խոշորացման գործընթացի շրջանակներում կկատարվեն Գնդեվազ և Ջերմուկ համայնքների վարչական կառույցի փոփոխություններ: Սույն ԲՍԱԳ-ը մշակելու ժամանակ համայնքների խոշորացման և դրա արդյունքների ժամկետները դեռ չէին սահմանվել:

Տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքում սահմանվում են համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի (հաճախ անվանվում է համայնքապետ) երկու առանցքային օղակները: Միասին այս երկուսը հանդես են գալիս որպես որոշում կայացնող տեղական մարմիններ, որտեղ համայնքի ավագանին գործում է որպես ներկայացուցչական մարմին, որի նիստերը գումարվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ: Համայնքի ղեկավարների ու ավագանու անդամների ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ՝ յուրաքանչյուրի պաշտոնավարության չորս տարի ժամկետով:

Տեղական ինքնակառավարման մարմինների վերահսկումն իրականացվում է ուղղահայաց հիերարխիայի սկզբունքով: Տեղական վարչական անձնակազմը և համայնքային հիմնարկները հաշվետու են համայնքի ղեկավարին, ով իր հերթին հաշվետու է ավագանու խորհրդին: Տեղական վարչական աշխատակազմի կազմը կախված է բնակչության թվաքանակից, սակայն նվազագույնը ներառում է համայնքի ղեկավարի տեղակալի, աշխատակազմի և ստորաբաժանումների քարտուղարի պաշտոնները:

¹² http://www.sdc.admin.ch/en/Home/Projects/Project_Detail?projectdbID=226361

4.11.7 Ծառայությունների մատուցման պարտավորություններ

Տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են կառավարման հետևյալ գործառույթները.

- Քաղաքացիների իրավունքների և տեղական ինքնակառավարման մարմինների շահերի պաշտպանություն
- Տեղական զարգացման ռազմավարության մշակում
- Ֆինանսական խնդիրների և համայնքի սեփականության կառավարում
- Ծրագրերի իրականացում և ռազմավարական նպատակների նվաճում
- Քաղաքացիների կարիքների որոշում, հաշվառում և կանխատեսում, դրանց բավարարման համապատասխան մեթոդների և լուծումների նախագծերի մշակում
- Հանրային ծառայությունների մատուցման նպատակով ռեսուրսների հատկացում, առկա ռեսուրսների լրացում և նոր ռեսուրսների որոնում, և
- Եռամյա զարգացման ծրագրերի իրականացման վերահսկողություն՝ համապատասխան ճշգրտումների կատարմամբ¹³:

Ծառայությունների մատուցման պատասխանատվությունը ամփոփ ներկայացված է Աղյուսակ 4.11.3 -ում: Աղյուսակից պարզ է դառնում, որ որոշ ծառայությունների համար քաղաքապետարաններն ու կառավարությունը համատեղ պատասխանատվություն են կրում, օրինակ, առողջության առաջնային պահպանումը և տարածաշրջանային տնտեսական զարգացումը:

Աղյուսակ 4.11.3. Հայաստանի կառավարության օղակների յուրահատուկ գործառույթները¹⁴

¹³ Թումանյան, (2005), op. cit.
ZT520088
Հունիս 2016թ.

Գործառույթներ	Քաղաքապետարաններ	Կենտրոնական կամ տարածքային կառավարում
I. Կրթություն		
Նախադպրոցական	X	
Տարրական		X
Միջնակարգ		X
Տեխնիկական		X
Բարձրագույն		X
Մասնագիտացված	X	
II. Սոցիալական բարեկեցություն		
Տնկարաններ	X	
Մանկապարտեզներ	X	
Խնամքի տներ		X
Անհատական/կենցաղային ծառայություններ ծերերի և հաշմանդամների համար		X
Հատուկ ծառայություններ (անօթևանների, ճգնաժամային իրավիճակում գտնվող ընտանիքների համար և այլն)		X
Սոցիալական բնակարանների ապահովում	X	
III. Առողջապահական ծառայություններ		
Առողջության առաջնային պահպանություն	X	X
Առողջության պաշտպանություն		X
Հիվանդանոցներ		X
Հանրային առողջություն	X	X
IV. Մշակույթ, հանգիստ, սպորտ		
Թատրոններ	X	X
Թանգարաններ	X	X
Գրադարաններ	X	X
Այգիներ	X	
Սպորտ, ժամանց	X	
Մշակութային միջոցառումների նպատակով շենքերի պահպանում	X	
V. Տնտեսական ծառայություններ		
Ջրամատակարարում	X	
Կոյուղի	X	
Էլեկտրականություն		X
Գազ		X
Կենտրոնացված ջերմամատակարարում	X	
VI. Շրջակա միջավայր, Սանիտարիա		
Թափոնների հավաքում	X	

¹⁴ Թումանյան (2005), op. cit.

Աղյուսակ 4.11.3. Հայաստանի կառավարության օղակների յուրահատուկ գործառույթները ¹⁴		
Գործառույթներ	Քաղաքապետարաններ	Կենտրոնական կամ տարածքային կառավարում
Թափոնների հեռացում	X	
Փողոցների մաքրում	X	
Գերեզմանոցներ	X	X
Շրջակա միջավայրի պահպանություն	X	X
VII. Ճանապարհային երթուղիներ, տրանսպորտ		
Ճանապարհներ	X	X
Լուսավորություն	X	X
Հասարակական տրանսպորտ	X	X
VIII. Քաղաքաշինություն		
Քաղաքի հատակագծում	X	
Տարածաշրջանային/տարածական նախագծում		X
Տեղական տնտեսական զարգացում	X	X
Տուրիզմ		X
IX. Ընդհանուր վարչարարություն		
Լիազորչական գործառույթներ (լիցենզիաներ, և այլն)	X	X
Այլ պետական վարչական հարցեր (ընտրական ռեգիստր և այլն)	X	X
Տեղական ոստիկանություն		X
Հրշեջ ծառայություն		X
Քաղաքացիական պաշտպանություն	X	X
Սպառողների պաշտպանություն		X

Ամուլսարի ծրագրի տարածքում գյուղական և քաղաքային համայնքները պատասխանատու են հետևյալի համար.

- Մանկապարտեզներ** – տեղական ինքնակառավարման մարմինը պատասխանատու է մանկապարտեզների կառավարման և շահագործման համար: Այս հաստատությունների շահագործման և պահպանման ծախսերը համատեղ ծածկվում են ծնողների վճարումների և համայնքի բյուջեյի հաշվին:
- Մասնագիտական կրթություն** - մասնագիտական կրթությունը ներառում է երեխաների երաժշտական, կերպարվեստի, ատլետիկայի և տեխնիկական հմտությունների ուսուցումն ապահովող հաստատությունները: Տեղական

ինքնակառավարման մարմինը նաև պատասխանատու է այս հաստատությունների ապահովման և վարձավճարների գանձման համար:

- **Տարրական և միջնակարգ դպրոցներ** – Կրթության ապահովումը պետական կառավարման պարտականությունն է հանդիսանում, որը ֆինանսավորում և ղեկավարում է սույն հաստատությունները, զբաղվում է ուսուցիչների և ադմինիստրատորների աշխատանքի ընդունմամբ և որոշում ուսումնական ծրագրերը ու իրականացման ստանդարտները:
- **Համայնքային գրադարանների շենքեր**- Այս կառույցների պահպանման համար պատասխանատվություն են կրում համայնքային տեղական ինքնակառավարման մարմինները:
- **Առողջապահություն** – Թեպետ առողջապահությունը ապահովում է կենտրոնական կառավարությունը, որոշ համայնքներում առկա են առողջության առաջնային պահպանման կլինիկաներ, որոնց ֆինանսավորումը ստացվում է օգտվողների վճարների, համայնքային բյուջեներից ներդրումների, տարբեր տեղական և միջազգային կազմակերպությունների աջակցության հաշվին:
- **Գազ և էլեկտրաէներգիա**- Թեպետ գազի և էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգերի ապահովումը բխում է կառավարությունից, սակայն բնակիչների և ձեռնարկությունների համար նման ծառայությունների համակարգերի ներդրման աջակցման պատասխանատվությունը կրում են տեղական ինքնակառավարման մարմինները:

4.11.8 Տեղական ինքնակառավարման մարմինների բյուջե

Տեղական ինքնակառավարման մարմինները մեծապես կախված են պետական բյուջեի փոխանցումներից, որոնք հաճախ կազմում են տեղական բյուջեի եկամուտների ավելի քան հիսուն տոկոսը: Համայնքի բյուջեի ձևավորման հիմնական աղբյուրներն են.

- Կառավարության կողմից սահմանած հարկերը և տուրքերը,
- պետական բյուջեից սուբսիդիաները,
- տեղական տուրքերը և վճարները,
- Հողի և գույքի վարձակալությունը, և

- համայնքի սեփականության վաճառքից ստացվող հասույթը:

Մինչդեռ բոլոր հարկերը հավաքվում են պետական հարկային ծառայության կողմից, համայնքային մակարդակում հավաքագրված հողի և գույքի հարկերի և վարձավճարների հարյուր տոկոսը վճարվում է տեղական ինքնակառավարմանը, և դա հաճախ կազմում է տեղական ինքնակառավարման եկամուտների հիմնական աղբյուրը:

Տեղական ինքնակառավարման աշխատակիցների վարձատրության գործընթացը կարգավորվում է Տեղական ինքնակառավարման մասին օրենքով, որով նախատեսվում է, որ ավագանու աշխատանքը չի փոխհատուցվում, և սահմանում է համայնքի ղեկավարի աշխատավարձը, որպես մարզպետի աշխատավարձի մի մաս՝ հիմք ընդունելով բնակչության թվաքանակը:

4.11.9 Համայնքների սոցիալ-տնտեսական կառուցվածքը և կազմակերպումը

Ինչպես Հայաստանի այլ տարածքներում ծրագրի տարածքում ևս ազգակցությունը սոցիալ-տնտեսական կառուցվածքի կարևոր տարրերից է հանդիսանում: Ելնելով տնտեսական և մշակութային տարբեր պատճառներից, շատ գյուղական բնակիչներ ապրում են համատեղ/տարբեր սերունդներին պատկանող ընտանիքներում:

Գործունեության որոշ տեսակներ իրականացվում են համագործակցության և ոչ պաշտոնական հասարակական կազմակերպման միջավայրում, օրինակ, տվյալ տարածքում որոշ հովիվներ կիսում են միմյանց անասունների արածեցման պատասխանատվությունը՝ աշխատելով միասին չորսից հիգ անձով նախապես փոխհամաձայնեցված հերթափոխով: Եթե ընտանիքը չունի աշխատունակ ներկայացուցիչ (սովորաբար արական սեռի), ապա ընտանիքին պատկանող անասունները վստահվում են ընտանիքի ընկերոջը կամ հարևանին, ով վճարվում է իր ծառայությունների դիմաց:

4.11.10 ՀԿ-ներ և այլ հաստատություններ

Հասարակական կարծիքի ձևավորման վրա ազդեցություն ունեցող առանցքային հաստատությունները Հայաստանում հետևյալներն են.

- Հայ առաքելական եկեղեցի,

- Միյունք,
- Եվրոպական Միություն և Համաշխարհային բանկի խմբի հաստատություններ,
- Միջազգային դոնոր կազմակերպություններ և ՀԿ - ներ,
- ՋԼՄ – ներ, և
- Հայաստանյան հասարակական կազմակերպություններ (ՀԿ - ներ) և քաղաքացիական հասարակություն:

Հայաստանը առաջատար դիրք գրավում մեկ շնչի հաշվով մարդկանց արտագաղթի մակարդակով, և այժմ Միյունքում բնակվում են Հայաստանից թվաքանակով երկու անգամ ավել հայեր: Միյունքից կատարված դրամական փոխանցումները կարևոր դեր ունեն երկրի տնտեսության համար: Միյունքն հանդիսանում է արտաքին շուկաների և Հայաստանում բնակվող հայերի միջև կարևոր կապող օղակ: 2011-2015թթ. մասնավոր փոխանցումները կազմել են Հայաստանի ՀՆԱ-ի 19,1%, ինչը 2006-2010թթ. համեմատ նվազել է 21%-ով¹⁵:

Հայաստանում ՀԿ-ն սահմանվում է որպես հասարակական կամավորական միավորման տեսակ, որը ձևավորվել է անձանց հոգևոր, ոչ նյութական կարիքները կամ ցանկությունները բավարարելու համար և կարող է ստեղծվել անհատի կամ այլ ՀԿ-ի կողմից նվազագույնը 3 հիմնադիր անձանց առկայության պայմաններում: Հասարակական կազմակերպության ստեղծման սահմանափակ պահանջները հանգեցրել են Հայաստանում գրանցված բազմաքանակ հասարակական կազմակերպություններին (2010թ.¹⁶ ավելի քան 3,300 ՀԿ-ներ են պետական գրանցում ստացել, որոնցից ընդամենը 1000-ն են մշտապես գործունեություն ծավալում): Երկրում առկա են մոտ 60 գրանցված բնապահպանական ՀԿ – ներ: Ենթադրվում է, որ այս կազմակերպություններից ավելի քան կեսի գործունեությունը ընդհատական բնույթ է կրում և կախված է ֆինանսավորումից և հասանելի ռեսուրսներից:

¹⁵ <http://data.worldbank.org/indicator/BX.TRF.PWKR.DT.GD.ZS>

¹⁶ www.civiltasfoundation.org (accessed September 4th, 2012)